քննության հետ կապված այլ ծախսերից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի՝ Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ գրավոր միջնորդության տեսքով: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

Տվյալ դեպքում, Հայվորի կողմից դատական ծախսերի մասով միջնորդություն չի ներկայացվել, հետևաբար դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-194 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցը բավարարել.

1.Անվավեր ճանաչել «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի և «Աննարկա» ՍՊԸ-ի միջև 12.12.2023թ.-ին կնքված Պետության կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների մատակարարման թիվ «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0201-17» պայմանագրի 26.08.2024թ.-ի «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծումը:

2.Անվավեր ճանաչել «Աննարկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 03.09.2024թ.-ի որոշումը:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Նաիրա Ավետիսյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am